յաւուր Կիւրակէի ոչ ինչ պատճառաւ եհար և խորտակեաց զմամեղէնս և զերիս կանթեղս կախեալ 'ի շղթայէ առաջի գերեզմանին, նախատելով զմիաբանութիւնն եւ զազգն, և արգել զժամարարն մտանել 'ի գերեզման։ Լուեալ զայս Թէոդորոսի՝ ազգ արար Փոխանորդին Յունաց 'ի ձեռն Թարգմանին իւրոյ, և նորա կոչեալ զՏեսուչն յանդիմանեաց՝ և խնդրեաց զի ներեսցէ Պատրիարքն, իբրու թէ նա 'ի քարկուքեան իւրում յանդէպս արարեալ իցէ զայն։ Միաբանք Հայոց 'ի խորհուրդ դումարեալ քննեցին զվաւերական գրեանս վասն գերեզմանի Ս. Կուսին, և գտին զնոսա հաստատուն, մեծաբանելն և խրոխտալն Յունաց՝ հակառակ էր այնց գրոց։

Եւ 'ի խորհրդեան սահմանեցաւ՝ զի ինքեանք եւս յաւելցեն զայլ իրս յեկեղեցւոջ անդ, որպէս Յոյնք արարեալ էին։ Եւ զկնի աւուրց եկին ոմանք 'ի Յունաց միջնորդ լինել հաշտութեան, իսկ Աւետիս Թարգման ասէ նոցա զարժանաւոր պատասխանիս, առաջի դնելով զնեղրողութիւնն Հայոց եւ զբմբոստութիւնն Յունաց՝ սահմանելով նորանոր իրս յեկեղեցւոջ անդ, և զսահմանեալն Հայոց ջանալ բառնալ և ջնջել 'ի միջոյ։ Ո՛վ ետ ձեզ զիշխանութիւնդ զայդ. գործել ըստ հաճոյից ձերոց՝ և աղարտել զպատիւ ողջոյն ազգի միոյ. զի եթէ ոչ էր լուեցուցեալ մեր զծերունիս՝ վաղու եւս հանդիպեալէր ձեր մեծամեծ վնասուց՝ և զայլ սոցին նման բանս լուեալ Յունաց մեկնեցան։ Իսկ Հայք կախեցին 6 կանթեղս 'ի շղթայէ անտի փոխանակ երից, և սամանեցին ածել աւել յեկեղեցին։ Լուեալ զայսոսիկ Յունաց վերստին եկին առ Թէոդորոս՝ և խնդրեցին 'ի նմանէ բառնալ զերիս կանթեղս 'ի շղթայէ անտի։ Առ որս ետուն պատասխանի՝ 'ի խորտակել երից կանթեղացն՝ ոչ ինչ խնդիր արարին միաբանք ձեր, այժմ ընդէ՞ր թախանձեն բառնալ զերիս կանթեղս. ուստի՞ առեալ է ձեր զայդ հրաման օր քան զօր յաւելուլ և սահմանել նորանոր իրս, և այլ սոցին նման բանք. 'ի մէջ առին նաեւ զրանս Աւետիս Թարգմանին զոր խօսեցեալէր նոցա, 'ի վերջոյ անկարելի ասացին բառնալ զերիս կանթեղս. իսկ եթէ ոչ անասցէ՝ բողոք բառնամք առ դատաւորն և դատաստան խնդրեմք, որո՞ց հրամանաւ արար զայն